

Տիրամայր Նարեկի հայ կաքողիկէ եկեղեցի  
ի Մոնթեալ



ՕՐՀՆԵԱԼ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԸ



Յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգույն սրբոյ.  
ամէն:

### Տէրունական աղօք

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի  
անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. եղիցին  
կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց  
մեր հանապազրդ տուր մեզ այսօր. եւ քոյ  
մեզ զպարտիս մեր, որպէս եւ մե՞ք քողումք  
մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի  
փորձութիւն. այլ փրկեա ի չարէ: Զի քո է  
արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք  
յաւիտեանս. ամէն:

### Հրեշտակային ողջոյնը

Ողջոյն քեզ Մարիամ, իի շնորհօֆ, Տէր ընդ  
քեզ, օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է  
պսուղ որովայնի քո՝ Յիսուս:

Սրբուիի Մարիամ, մայր Աստուծոյ,  
բարեխօսեա՝ կասն մեր՝ մեղաւորացս,  
այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. ամէն:

Փառք Հօր եւ Որդույ եւ Հոգույն սրբոյ,  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
ամէն:

## Ուրախութեան խորհուրդները (Երկուշարքի, Շարաք)

- Կ'ուրախանանք մեզի հետ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ Գարբիկլ Հրեշտակապետը երեւցաւ մեզի եւ աւետեց թէ Յիսուսի Մայրը պիտի ըլլաս:
- Կ'ուրախանանք մեզի հետ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ երբ այցելութեան գացիր Եղիսարէթին, ան Քեզ նանչցաւ եւ հոչակեց մեզ Մայր Աստուծոյ:
- Կ'ուրախանանք մեզի հետ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ ծնար մեր Փրկիչը, Յիսուս Քրիստոս, Բեթղեհէմի ժարայրին մէջ:
- Կ'ուրախանանք մեզի հետ, ո՞վ Կոյս Մարիամ, որովհետեւ ընծայեցիր քու Որդիի՝ Յիսուսը, Երուսաղէմի Տաճարին մէջ:
- Կ'ուրախանանք մեզի հետ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ երեք օր փնտոելէ յետոյ՝ գտար Յիսուսը Երուսաղէմի Տաճարին մէջ:

## Փառաւորութեան խորհուրդները (Երեքշարքի, Կիրակի)

- Կը փառաւորենք մեզ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս յաղթական կերպով յարութիւն առաւ Ա. Զատկին օրը:
- Կը փառաւորենք մեզ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս, իր աշակերտներուն առջեւ երկինք համբարձաւ:

3. Կը փառաւորենիք ֆեզ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ Հոգին Սուրբ հրեղէն լեզուի ձեւով իջաւ առավեալներուն վրայ:
4. Կը փառաւորենիք ֆեզ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ մահէդ վերջ՝ Որդիիդ նման յարութիւն առիր եւ երկինիք վերափոխուեցար:
5. Կը փառաւորենիք ֆեզ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ երկինիքի եւ երկրի Թագուհի պսակուեցար Ամենասուրբ Երրորդութենին:

**Տրտմութեան Խորհուրդները  
(Չորմեցարքի, Խորք)**

1. Կը տրտմինիք ֆեզի հետ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս՝ արիւն ֆրտնեցաւ Գեթսեմանիի պարտէզին մէջ:
2. Կը տրտմինիք ֆեզի հետ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս մեր մեղֆերը բաւելու համար՝ սիւնին կապուած ճաղկուեցաւ:
3. Կը տրտմինիք ֆեզի հետ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ, Յիսուս փուշերով պսակուեցաւ, մեր՝ մտքով գործած մեղֆերը բաւելու համար:
4. Կը տրտմինիք ֆեզի հետ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս, ուսը առած ծանր Խաչը՝ դէպի Գողգոռա բարձրացաւ:
5. Կը տրտմինիք ֆեզի հետ, ո՞վ Ս. Կոյս Մարիամ, որովհետեւ Յիսուս գամուեցաւ Խաչին վրայ երկու աւագակներու միջեւ:

## Լոյսի խորհուրդները (Հիմքաբառի)

- Կը լուսաւորուինք ֆեզմէ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ ներկայ եղար քու Որդիիդ մկրտութեան Յորդանան գետին մէջ:
- Կը լուսաւորուինք ֆեզմէ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ դուն միջնորդեցիր Յիսուսի քով՝ կատարելու իր առաջին հրաշքը կանայի հարսանիքին:
- Կը լուսաւորուինք ֆեզմէ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ ապրեցար քու Որդիիդ առաքելական կեանքը, որուն ընթացքին Ան աւետեց Աստուծոյ Արքայութիւնը:
- Կը լուսաւորուինք ֆեզմէ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիիդ Յիսուս Քրիստոս իր առաքեալներուն առջեւ պայծառակերպեցաւ Թարոր Լերան վրայ:
- Կը լուսաւորուինք ֆեզմէ, ո՞վ Ա. Կոյս Մարիամ, որովհետեւ ականատես եղար քու Որդիիդ հաստատած Ամենասուրբ Հաղորդութեան Խորհուրդին՝ Վերնատան մէջ, Վերջին Ընթրիքին:

## ՈՂՋ ԼԵՐ, ԹԱԳՈՒՀԻ

Ողջ Եր, թագուհի, Մայր ողորմութեան, մեր կեանքը, Քաղցրութիւնը եւ յոյսը, ողջ լե՛ր: Քեզի կ'աղաղակենք Եւայի աքտորական որդիներս: Քեզի կը հառաչենք հեծելով ու լալով արցունքի այս

հովիտին մէջ: Եւ արդ, ո՞վ մեր բարեխօսը, մեզի դարձուր քու բարեգութ աչքերդ, եւ ցոյց տո'ւր մեզի քու որովայնիդ օրհնեալ պտուղը՝ Յիսուս: Ո՞վ զբած, ո՞վ բարեգութ, ո՞վ քաղցր կոյս Մարիամ:

Բարեխօսէ՛ մեզի համար Սուրբ Աստուածածին, որպէսզի արժանի բլլանի Քրիստոսի խոսումներուն: Ամէն

### ԼԻԹԱՆԻԱ. Ս. ԿՈՅՍԻՆ

Տէր ողորմե՛ա, Քրիստոս ողորմե՛ա  
Յիսուս, լո'ւր մեզ, Քրիստոս ամսա՛ մեզ  
Հայր երկնաւոր Աստուած, ողորմե՛ա մեզ  
Որդիդ Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմե՛ա մեզ  
Հոգիդ Սուրբ Աստուած, ողորմե՛ա մեզ  
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողորմե՛ա մեզ

Սրբուհի Մարիամ,  
Սուրբ Աստուածածին  
Սուրբ կոյս կուսանաց, աղօթե՛ա վասն մեր.

Մայր Քրիստոսի  
Մայր Աստուածային շնորհաց  
Մայր մաֆուր

Մայր սուրբ  
Մայր ամարատ  
Մայր անրիծ

Մայր սիրելի  
Մայր սմանչելի  
Մայր բարի խորհրդոյ

Մայր Արարչին  
Մայր Փրկչին  
Կոյս իմաստուն

Կոյս յարգոյ  
Կոյս ժարողելի  
Կոյս հզօր

Կոյս գթած  
Կոյս հաւատարիմ  
Հայելի արդարութեան

Աքոռի իմաստութեան  
Պատճառ մերոյ խնդութեան  
Անօր հոգեւորական

Անօր պատուելի  
Անօր ընտիր աստուածպաշտութեան  
Վարդ խորհրդական

Աշտարակ Դաւթեան  
Աշտարակ փողոսկրեայ  
Տուն ուկեղէն

Տապանակ Ուխտի  
Դուռն երկնից  
Աստղ առաւօսեան

Առողջութիւն հիւանդաց  
Ապաստան մեղաւորաց  
Մխիթարիչ վշտացելոց

Օգնական քրիստոնէից  
Թագուհի Հրեշտակաց  
Թագուհի Նահապետաց

Թագուհի Մարգարէից  
Թագուհի Առաքելոց  
Թագուհի Մարտիրոսաց

Թագուհի Խոստովանողաց  
Թագուհի Կուսանաց  
Թագուհի Ամենայն Սրբոց

Թագուհի Անարատ Յղացեալ  
Թագուհի Փոխեալ յերկինս  
Թագուհի սուրբ Վարդարանի

Թագուհի Խաղաղութեան

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի  
Խնայե՛ա ի մեզ, Տէր

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի  
Անսա՛մեզ, Տէր

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի  
Ողորմե՛ա մեզ  
Յիսուս, լո՛ւր մեզ: Քրիստոս, անսա՛մեզ:

## *Աղօթք*

Աստուած անժառելի ողորմութեան, որ ոչ  
միայն մարդ, այլ եւ որդի մարդոյ լինել հանեցար, եւ  
ծնանելով ի կուսէն՝ զՄայր ի յերկրի ստացար, որ  
զԱստուած ունէիր հայր յերկինս. տո՛ւր մեզ,  
աղաչե՞մք, զյիշատակ նորա յօժարութեամբ  
կատարել, զմայրութիւն նորա գերազոյն յարգանօք  
պատուել, գերապանձ վսեմութեան նորա զմեզ  
խոնարհութեամբ հպատակել, որ զթեզ Հոգւով Սրբով  
յղացաւ. զթեզ կուսութեամբ ծնաւ, եւ զթեզ յերկրի  
ինքնեան հնազանդ կալաւ, զՏէրդ մեր Յիսուս  
Քրիստոս, որ կենդանի ես եւ թագաւորես ընդ Հօր եւ  
ընդ Սուրբ Հոգւոյդ ի յաւիտեանս : Ամէն :

### Փունից մը երգեր առ Ա. Կոյս

#### 1.Ամիսն ահա Ա. Կուսին

Ամիսն ահա Ա. Կուսին, ամիս յոյժ գեղեցիկ  
Աստուածամօր միասին, ուղղենի երգ մը  
քաղցրիկ  
Ծաղիկներով խընկահոտ, զարդարենի իր  
տաճար  
Նուագներով եռանդոտ, գովենի իր գեղ աննառ  
Ամիսն ահա Ա. Կուսին, ամիս յոյժ գեղեցիկ  
Աստուածամօր միասին, ուղղենի երգ մը  
քաղցրիկ  
Նոր զարուն գեղանի կը գովեն թոյրն ու րոյր

Մարիամ անկէ շատ ունի քէ՛ շընորհ քէ՛  
հրապոյր

Ամիսն ահա Ս. Կուսին, ամիս յոյժ գեղեցիկ  
Աստուածամօր միասին, ուղղենի երգ մը  
բաղցրիկ

### 2. Հոն պիտի տեսնենի զինի

Հոն պիտի տեսնենի զինի  
Հայրենեաց մէջ յարածալ  
Պիտի տեսնենի Մարիամ  
եւ իրմով զմայլինի

Երկինի, երկինի, երկինի,  
Հոն պիտի տեսնենի զինի

Հոն պիտի տեսնենի զինի  
Այս է դարման մեր ցաւոց

Այս արտասուաց հովտին ծոց  
Ուր նժդեհ կը շրջինի

Երկինի, երկինի, երկինի,  
Հոն պիտի տեսնենի զինի

### 3. Ուսիրտ Մարիամու

Ո՞վ սիրտ Մարիամու, շնորհի գանձարան  
Ծով անսպառ բարութեան

Երկնային սիրոյ անշեղ վառարան

Աղօթեա, աղօթեա վասն մեր

Ո՞վ սիրո Մարիամու, գանձ ողորմութեան  
Արդարներու ապաստան  
Մեղաւորին յոյս, լաստ մերոյ փրկութեան

Աղօթեա, աղօթեա վասն մեր:

#### 4. Գարրիէլ ի ձեռհնան

Գարրիէլ ի ձեռին ծաղիկն անքառամ  
Աւետեց քեզ Փրկչին խորհուրդն, ով Մարիամ

Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ  
Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ

Քու խօսքովդ Տէրն երկնից անվիշտ ու անցառ  
Յարգանդիդ սուրբ անքիծ եկաւ հանգչեցաւ.

Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ  
Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ

Գարրիէլ հրեշտակին հետ եւ մենք այսօր  
Կ'ողջունենք քերկրագին, ըգբեզ, կոյս հզօր

Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ  
Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ

## 5. Երկինք երկիր կը հիանան

Երկինք երկիր կը հիանան գեղեցկութեանը՝  
վըրան

Ով դիւրիչ ծիածան աստղ առաւօտեան

Քու փառքերդ կը պատմեն հրեշտակներն ամէն  
Արշալոյս լուսագեղ, Կոյս ամենագեղ

Խմաստոթիւն յաւերժական յաւիտենից տուա  
հրաման

Որ ծոցիդ մէջ աշուշան՝ մարմին առնու թանն

Այն որուն ակնարկին, աստղերն երկնին,  
Ցըրուեցան զերք փոշի խորքերն անհունի:

## 6. Ողջոյն Աստղ ծովու

Ողջո՞յն, Աստղը ծովու Տիրամայր գրթալից  
եւ միշտ կոյս սիրարկու, Երանեալ դուռն  
երկնից  
եւ միշտ կոյս սիրարկու, Երանեալ դուռն  
երկնից:

Գարրիել ֆեզ տուա, Երկնառամ մեր ողջոյն  
Եւայի մեղսաբաւ, տուր հանգիստ մեր հոգւոյն  
Եւայի մեղսաբաւ, տուր հանգիստ մեր հոգւոյն

Խորտակէ՛ կապ մեղաց, պարզեւէ՛ կուրաց լոյս  
Հալածէ՛ չարն ի բաց, առ բարիք ամէնուս  
Հալածէ՛ չարն ի բաց, առ բարիք ամէնուս

## 7. Երանելի կոյս Մարիամ

Երանելի կոյս Մարիամ  
 խոնարհ սրտով ֆեղ կը դառնամ  
 Ընդունէ զիս թեւերուդ տակ,  
 Ու պաշտպանէ միշտ անսայթաք  
 Ու պաշտպանէ միշտ անսայթաք:

Կարկառէ ինձ, Մայր սիրելի  
 Գըթու ձեռքերդ շնորհալի  
 Որպէս զի միշտ սուրբ իղձերով  
 Վայելեմ քու սէրդ ու գորով  
 Վայելեմ քու սէրդ ու գորով:

Ահ, երջանիկ կը համարիմ  
 Ըլլալ որդի, ֆեղի, Մայր ինք  
 Որովհետեւ դուն տիրապէս  
 Տիեզերքի Փրկչին Մայրն ես  
 Տիեզերքի Փրկչին Մայրն ես:

## 8. Երբ կը կրկնեմ անունդ

Երբ կը կրկնեմ անունդ ով Մայր  
 Սիրտս յոյզով կը լեցուի  
 Կ' ուզեմ երգել ես անդադար  
 Սէրդ ու գորովդ մայրենի

Օրինեալ ըլլայ ամէնուրեք  
 Անունդ ով Մայր աննման  
 Դուն կորովն ես իմ կեանիիս հեք  
 Լոյսն ու ժպիտը մահուան

Երբ կը կրկնեմ անունդ ով Մայր  
կեանքըս նոր ոյժ կը զգենու  
Կը դիւրանայ ամէն պայֆար  
Կ'իյնան խութերը հուժկու

Երբ կը կրկնեմ անունդ ով Մայր  
կը մոռնամ ցալը կեանքի  
Հոգ չէ խոցեն զիս անհամար  
Փուշերը սուր եւ վայրի

### 9. Ծուփներկրի վրայ

Ծուփն երկրի վրայ կը ծաւալի  
Տե՛ս զաւակներդ կը դառնան  
Ոտքդ կու զան, Մայր պանձալի  
Քեզ նուիրելու վերջն օրուան

Ով կուսամայր Խնամակալ  
Ով մեր յոյսն աննման  
Ընդունէ՛ մեր աղօթքն ալ  
Աղօթք ու երգն երեկոյեան

Արշալոյսին ծագած ատեն  
Ծունկիդ առջեւն էինք մենք  
Ահաւասիկ կու զանք նորէն  
Հսկէ՛ մեր վրայ, կը գոչնեն:

Ով կուսամայր Խնամակալ  
Ով մեր յոյսն աննման  
Ընդունէ՛ մեր աղօթքն ալ  
Աղօթք ու երգն երեկոյեան

## 10. Ողջոյն fեզ, Անարատ Յղացեալ


Ողջոյն fեզ, Անարատ Յղացեալ  
 Ողջոյն fեզ, տաճար քանին Աստուծոյ  
 Ողջոյն fեզ շfեղ հարսն Հոգւոյն Սրբոյ  
 Ուրախ Լեր, ամպ թեթեւ, Աստուածածին Սուրբ  
 Կոյս  
 Ուրախ Լեր, բերկրեալդ, օրինեալ դու ի կանայս  
 Ողջոյն fեզ, վսեմ Թագուիի  
 Ողջոյն fեզ, մայր համայն մարդկութեան

Ողջոյն fեզ, Անարատ Յղացեալ  
 Անարատ Յղացեալ, ողջոյն fեզ  
 Ողջոյն fեզ, ողջոյն fեզ:

## 11. Անթառամ Ծաղիկ

Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիդ,  
 վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ: Զfեզ  
 Եսայիսա կանրխաւ վերագոչեաց եօթնարփեան  
 շնորհաց Հոգւոյն ընդունարար գոլ:  
 Աստուածածին եւ կոյս qfեզ մեծացուցանեմք:

\*\*\*\*\*



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

### Հացսայս

*Հացսայս Մարմին է Քրիստոսի  
Բաժակս Արիւն նորոյ Ուխտի  
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի  
Աստուածի սմա մեզ տեսանի*

*Սա է Քրիստոս Բանն Աստրուած  
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի  
Եւ աստ ի մեզ պատարագի  
Բառնայ ըզմեղս աշխարհի*

Քին. Տեր Աստուած բարձրեալ ամենակալ, լոյս  
անքնին, մեծութիւն ահեղ, գթութիւն անսահմանելի,  
մարդասիրութիւն օրինաբանելի, Յիսուս Աստուծոյ  
կենդանոյ միածին Որդի: Որ սքանչելարուեստ  
հրաշիւր, անպարազիրդ էակ, վասն մեր եղեր մարդ  
ի Կուսէն: Որ արեամբդ քո զմեզ ստացար, եւ  
մարմնովդ կերակրես: Որ կարգեալ զայս խորհուրդ  
անձառելի՝ ուխտ կենաց անփոխադրելի  
սահմանեցեր: Որ յանուն զենման՝ միշտ յիշատակաւ  
քո չարչարանաց առ Հայր քո բարերար աղօթել զմեզ  
համարձակեցեր, եւ զայս տուրս շնորհաց քան  
զամենայն գործոց քոց զսքանչելիսն մեծացուցեր: Լուր մեզ,  
բազմագութ մարդասեր, տուր զպարարեալ  
վշտօք մարմինդ քո ամենայն սրտի սրբարար  
կերակուր. զի զքեզ ունին քաւիշ քահանայ՝ զնեալ  
արեամբ հօտս քո, հայեաց յամենեսեան, հանգո  
զաշխատանս մեր ի քո օթեւանսդ, ուր զնացեր, Տեր,  
եւ խոստացար: Արժանացո զքոյս փառաւորել զքեզ  
այդր ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգուոյդ ի յալիտեանս:

Դպ. Ամէն

Հովիւ քաջ եւ առաջնորդ բանաւոր հօտի, աղաչեմք  
զքեզ, Տեր, նայեա զթութեամբ ի ծառայ քո  
ՖՐԱՆՇԻՍԿՈՍ Քահանայապետ զոր կարգեցեր

հովի եկեղեցւյ քում սրբոյ. Տուր նմա բանիւք եւ արդեամբք առաջնորդել ի փրկութիւն իւրոց հնազանդելոցն հաւատացեալ նմա հօտին. Զի ընդ նոսին ժամանեսցէ ի կեանսդ յաւիտենից:

Դպ. Ամէն

### Աստուած մեր

*Աստուած մեր եւ Տէր մեր, երեւեցաւ մեզ  
Օրհնեալ եկեալ անուամբ Տնառն:*

### Յաստուածային

*Յաստուածային կայծակունս, ի Սրովրէից  
Անհպելին, Անմաքրապէս մերաեցաք, գոլ պարտապան քում  
Խորհրդոյն  
Ծնորհեա ըգնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց  
մերոց  
Որ վառեցար ի յարփոյն եւ ոչ կիզար ըստ  
մորինոյն  
այլ ետուր զշացըն կենաց կերակոր բանաւորաց:  
Բարեխօսեա առ Քրիստոս ջնջել զզիր մեղաց մերոց:*

\*\*\*\*\*

2015

